



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ (2016թ.)

Առողջապահական համակարգի արդիականացում ծրագրի շրջանակում կատարվել է մարզային բժշկական կազմակերպությունների կառուցում, հիմնանորոգում և վերազինում: Տարեսկզբին շահագործման է հանձնվել Մեղրու տարածաշրջանային բազմապրոֆիլ բժշկական կենտրոնը: Իրենց դռներն են բացել նորակառույց հինգ գյուղական առողջության կենտրոններ: Մեկնարկել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի շինարարական աշխատանքները: 15 բժշկական կազմակերպությունների համար ձեռք են բերվել բժշկական և ախտորոշիչ սարքավորումներ, բժշկական կահույք: Արդիականացված մարզային բժշկական հաստատություններն անհրաժեշտ մասնագետներով ապահովելուն ուղղված առաջարկություններ են ներկայացվել ՀՀ կառավարություն:

Հայաստանի Հանրապետությունում արյունաբանական և ուռուցքաբանական բժշկական օգնության ու սպասարկման որակի բարելավման նպատակով արդիականացվել և ամենավերջին սերնդի բժշկական սարքավորումներով է հագեցվել ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնը», որտեղ տեղակայվել են ոսկրածուծի փոխպատվաստման ծառայություն և ցողունային բջիջների լաբորատորիա: Կազմակերպվել են 6 մասնագետի վերապատրաստման դասընթացներ:

Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և վերահսկման նպատակով ՀՀ բնակչության ռիսկային խմբերում իրականացվել են սկրինինգներ՝ հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ: 2015թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. նոյեմբերի 30-ն իրականացվել է շուրջ 903.000 հետազոտություն:

Երևանում և մարզերում իրականացվել է ծրագրի հանրային իրազեկման քարոզարշավ, ինչպես նաև ծրագրի մշտադիտարկում՝ այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից:

Առանձին ոլորտներում Հայաստանի Հանրապետության բնակչության առողջապահական կարիքների գնահատում ծրագրի շրջանակում մշակվել է

առողջապահական պահանջմունքների և կարիքների բացահայտման ու գնահատման մեթոդաբանություն, զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի վերաբերյալ կատարվել է իրավիճակային վերլուծություն: Կատարվել են ընտրանքային հետազոտություններ, ուսումնասիրվել է բնակչության գոհունակությունն ու կարիքներն առողջապահական համակարգում:

Առողջապահության տարբեր ոլորտների բարելավման նպատակով ընդունված և իրականացված ռազմավարությունների ու ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով մշակվել են մեթոդաբանություններ: Ընդունվել են չորս ռազմավարություններ, իրականացվել է ծրագրերի արդյունավետության գնահատում: Համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Լաբորատոր համակարգի 2016-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Իսկ «Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայություններ» ծրագրի գնահատման արդյունքում լրամշակվել և նախարարի 2016թ. ապրիլի 27-ի թիվ 1256-Ա հրամանով հաստատվել է «Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով սրտի վիրահատական ծառայությունների կազմակերպման չափորոշիչը, ինչպես նաև ստենտավորման ժամանակ օգտագործվող ստենտի տեխնիկական փաստաթղթի բնօրինակի ամրագրումը հիվանդության պատմագրում: